ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/208

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24207-18 գրությամբ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու)՝ ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի 20.12.2018թ. թիվ 18-3/[1277703]-18 գրության հիման վրա, 26.12.2018թ. «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը 20.12.2018թ. թիվ 18-3/[1277703]-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից՝ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի մոտ ի հայտ են եկել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետով նախատեսված հիմքերը՝ մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը»:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն հիմնադրամի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

<u>3. «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.12.2018թ. գրությամբ դիմել է «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24207-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Բաղդասարյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/208 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/24207-18 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 18-3/[1277703]-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 01.11.2018թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Ընկերության կողմից էլեկտրոնային աճուրդին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ նաև Աճուրդ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

«ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ Աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը՝ 26.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 2-րդ կետով արձանագրել է, որ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում նշված է այլ ընկերության անվանում և տնօրենի անուն, ազգանուն:

- 4-րդ կետով որոշել է ծանուցել «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը՝ 01.11.2018թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 1-ին կետով արձանագրել է, որ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում առկա անհամապատասխնությունը և չի ներկայացրել շտկված դիմում-հայտարարություն:

- նույն կետով որոշել է «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ հրավերի 1-ին մասի 7.9 կետի 2-րդ պարբերության համաձայն Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում՝ գնահատվում են մասնակիցների կողմից

ներկայացված դիմում-հայտարարությունների՝ նույն հրավերի պահանջներին համապատասխանության հանգամանքը: Դիմում-հայտարարությունների գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, աշխատանքային օրվա ընթացքում: Եթե արձանագրվում են անհամապատասխանություններ նույն հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե նույն ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցության հայտ է ներկայացրել «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

- «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացրել է հրավերով սահմանված դիմում-հայտարարություն:

- Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում նշված է այլ ընկերության անվանում և տնօրենի անուն, ազգանուն:

- Հանձնաժողովի կողմից վերջինիս հնարավորություն է տրվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկում չի իրականացվել:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 1 հավելվածով՝ հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9 էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին՝ նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի արդյունքում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողություններն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24207-18 գրությամբ «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ԷՔՍՏՐԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**